

ւելորդ եւ վնասակար: Աշակերտը մէկ վայր-
կեանի մէջ կը սորվի կանոնը:

Այր վերջով քանի մը դերանուն եւ մակ-
բայ ունինք, եւ յատուկ անուններ. ու վերջով
միայն այն բառը: Ուրիշ ամէ տեղ յի կայ:

Ես պիտի խնդրէի խոնարհաբար հայկա-
կան կտուալարութենէն որ անմիջապէս մէյմէկ
անցադէր տար այդ ուսուցչապետներուն, եւ
վուժատուրթ Ֆրանսա վազէին՝ մէյմէկ սուր
եւ հաստ տապար ձեռքերնին՝ իրենց այդ կըտ-
րատումի եւ կրճատումի պապակին լիուրի յա-
գուրդ տալու համար. յի մը կտրելով ի՞նչ կ'ըլ-
լայ: Ֆրանսացուց լեզուական անտառին մէջ
կտրելու ահագին փայտ կայ. avaient կը գը-
րեն ave կը կարդան. կտրուելիք չորս գիր
կայ միա՛յն այդ բառին մէջ. ուսուցչապետ
գլուխ՝ մէ՛կ գիր. հիանալի մարզանք ալ կ'ըլ-
լայ իրենց: Անկէ կրնան ուղղակի Անգլիա նետ-
ուել. հոն ալ շատ ու շատ գործ կայ ընելիք.
անոնք ալ տանձ կը գրեն գանձ կը կարդան...
ո՞րքան երախտապարտ պիտի ըլլան իրենց Ալ-
պիոնի զուակները... Ֆրանսացիները. մինչ-
դեռ մենէ նոյրք միայն պիտի լսեն յաւիտեանս
յաւիտենից...

7. Փակ վանկերու մէջ գրել ուլ, երբ այս-
պէս կը հնչուի (լույս, կույր):

Գերյարգելի Յանձնաժողովր՝ ի շնորհս
երեսաց բաղձարդիւն Արեղեանի՝ հաճեր է ըն-
դունիլ անոր պղծադրութեան ամենէն այլան-
դակը: Հայ լեզուի ոգւոյն դէմ ասկէ աւելի
մեծ հայհոյութիւն չէր կրնար ընել: Մարդ
ուղղակի կը սահմուկի, կը քասքնի, կը քամնի
լոյս եւ կոյր հրաշալի գրութեան այդ հրէշա-
յին ձեւը տեսնելով, ու կը մտածէ թէ ի՞նչ
հարկ կը ստիպէ այդ ոճիւր գործերու:

Հայերէն լեզուի մէջ եթէ ներելի սղած ըլ-
լար ուլ ձեւ ունենալ, արդէն իսկ այդ գրչու-
թեամբ բառեր ունեցած կ'ըլլայինք: Այդ ձայ-
նը կայ տաճիկ լեզուին մէջ. խուլ, բուլա,
հուլա (հայտան կելէն հուլա կիտեր): Յանձ-
նաժողովը Երեւան նստեր լեզուին թրքըցնե-
լու է ելեր...

Իսյի մը վրայ տեսնենք սղածին այլան-
դակութիւնը: Թողուլ բային անկատարը առ-
նենք.

Թողուի	Թողուաք
Թողուիր	Թողուիք
Թողոյր	Թողուին

Եթէ այդ ճիւղը-ձուճաղաց ձեւը գոյու-
թիւն ունենար մեր լեզուին մէջ, պիտի ունե-
նայինք.

Թողուլի	Թողուլաք
Թողուլիր	Թողուլիք
Թողուլր	Թողուլին

Միեւնոյն այլանդակութեամբ պիտի ու-
նենայինք նաեւ՝

Սիրէյի	սիրէյաք
Սիրէյիր	սիրէյիք
Սիրէյր	սիրէյին

Մենք ուրեմն ուլ ձեւ չունինք, այլ ոյ վեր-
ջով բառեր, որոնց յին անձայն է. գոյ, գըլոյ,
երեկոյ, հաճոյ, խնջոյ:

Լեզուին ազամանդեայ օրէնքը այն է՝ որ
այ կամ ոյ ձեւերէն վերջ երբ բաղաձայն գիր
մը կուգայ, անձայն յին կը ձայնաւորի եւ ուղ-
ուած ձայնը կուտայ՝ փակ՝ ամփոփ, եւ ոչ թէ
ուլ տափակութեամբ. գոյք, հաճոյք, խնջոյք:

Նոյն երեւոյթն է նաեւ այն բառերուն մէջ
ալ, որոնք յիէ վերջ արմատական բաղաձայն
ունին. գոր ամէն հայ, նոյնիսկ նոր կարդալ
սկսող հայ տղեկն անգամ ուղիղ կը կարդայ՝
ատանց այդ այլանդակ ւ գրին պէտքն զգալու:

Լոյս, յոյս, փոյթ, հասոյթ, ծերոյթ,
ձանձրոյթ, գոյժ, յոյժ, բոյլ, հոյլ, ծոյլ, նը-
չոյլ, մակոյկ, խարոյկ, իսկոյն, յոյն, ողջոյն,
կոյս, կապոյտ, բոյր, քոյր, զրոյց, եւն.:

Նպատակ. ուղղագրութիւնը գիւրացնե՞լ.
չեմ կարծեր. մեր աղաքը մէկ բոպէի մէջ
կ'ըմբռնեն լեզուին ոգին. հապա ի՞նչ. վերն
ըսինք. ապականել լեզուն. լույս գրողը վաղը
լույսաւորել պիտի գրէ, կույր գրողը՝ կույրա-
նալ, եւն.:

Արմատական ձեւին մէջ պիտի ունենանք
աւելորդ ւ գիրը. ածանցմանց մէջ աւելորդ յ.
յոյս, յուսալ. բոյս, բուսական. համբոյր,
համբուրել. ասոնց տեղ յույս՝ յույսալ, բույս՝
բույսական. համբույր՝ համբույրել, ու նման
անդրալեռնական ձեւերը...

Հայո՛ւ տղայ, իսելք գլուխդ. չըլլայ թէ
այդպիսի գարշելի բան ընես. քու սուրբ նախ-
նեացդ անէծքը զլխուդ վրայ կը հրաւիրես.